ԷՄԻՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ
Երևանի համար 108 միջնակարգ դպրոց
Հայոց լեզվի և գրականության ուսուցիչ
emiko88@mail.ru

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑ

Բանալի բառեր և արտահայտություններ. «Մթնաձոր», «Ալպիական մանուշակ», «Բրուտի տղան», պատկերաստեղծման միջոցներ, գույնի և հնչյունի համադրություն, տարածության և ժամանակի միասնություն:

Ключевые слова и выражения: «Мтнадзор», «Альпийская фиалка», «Сын гончара», средства иллюстрации, сочетание цвета и звука, единство пространства и времени.

Key words and expressions: "Mtnadzor", "Alpine Violet", "Son of the Ceramist", methods of illustration, combination of color and sound, unity of space and time.

Նախաբան

Ակսել Բակունցն իր գրական կարճատև գործունեության ընթացքում հարուստ ժառանգություն չի թողել (պատմվածքների «Մթնաձոր» (1927), «Սև ցելերի սերմնացանը» (1933), «Անձրևը» (1935) ժողովածուները, «Եղբայրության ընկուզենիները» համանուն պատմվածքը և «Կյորես» վիպակը (1936) և պարբերական մամուլում առանձին մասերով տպագրված «Խաչատուր Աբովյան» և «Կարմրաքար» վեպերը, որոնք մնացին անավարտ):

Սակայն Ա. Բակունցը այն գրողներից է, որոնց գրական ժառանգությունը ծավալով չի արժևորվում, այլ գեղարվեստականությամբ, կերպարակերտման ու պատկերաստեղծման յուրահատկություններով, հետագայում թողած մշակութաբանական հետագծով:

Ա. Բակունցի պատմվածքները գեղարվեստական մտածողության թարմացման, գրական-գեղարվեստական զարգացումները նոր հունով տանելու փայլուն օրինակներ էին 1920-1930-ական թվականների «երկաթազարկի», «ագիտճառերի», մեծադողորդ փառերգությունների գրական մթնոլորտում: Եվ պատահական չէ, որ Ավ. Իսահակյանը 1934 թվականին Փարիզի «ՀՕԿ» պարբերականում տպագրված գրականության տարեկան տեսության մեջ Ա. Բակունցին համարում է հայ արձակի առաջին դեմքը: Իսկ Մարտիրոս Սարյանի հետ զրույցներից մեկում ասում է. «Կոմիտասի երգերի ու քո գույների առիթով խոսում են իբրև այնպիսի մի

հրաշքի մասին, որը չի կարելի բառերով արտահայտել: Բայց, իմ կարծիքով, դա այնքան էլ ճիշտ չէ: Հայաստանում կար մի գրող, որի բառերը զրնգում են կոմիտասյան ուժով ու փայլում են քո կտավների բոլոր գույներով: Դա Ակսել Բակունցն էր»[1]:

Բողանդակություն

Իր առաջին իսկ «Մթնաձոր» ժողովածուով Ա. Բակունցն, իսկապես, գրականություն բերեց գույների՝ նախադեպը չունեցող հրավառություն, մեղեդիների անկրկնելի մի համանվագ, որը, թերևս, տեսանելի ու լսելի չէին շատ շատերի համար:

«Մթնաձոր»-ում զետեղված պատմվածքների ամենաբնորոշ յուրահատկությունը գույների մեղեդավորումն ու մեղեդիների գունավորումն է, ինչը համահունչ է հերոսների ապրումներին, հույզերին ու զգացմունքներին, և, որ ամենակարևորն է, Ա. Բակունցի ստեղծած բնապատկերները դեկորացիաներ չեն, այլ խորհրդանիշներ, որոնց միջոցով բացահայտվում են մարդկային զգացմունքները, լսելի են դարձնում նրանց լռության ձայնը: Դրանք տեսանելի են տարածական բոլոր չափումների ծիրում, համահունչ են ժամանակի ռիթմերին:

Մի ուրույն աշխարհ է Ա. Բակունցի ներկայացրած Մթնաձորը. «Քիչ է ասել կուսական ու վայրի: Թվում է, թե այդ մոռացված մի անկյուն է այն օրերից, երբ դեռ մարդը չկար»[2]:

Մթնաձորում ժամանակն ուրիշ ընթացք ունի, որի «նվազ միավորը դարն է»: Հիմա էլ ժամանակը նույն ընթացքով է առաջ շարժվում. «Հիմա էլ Մթնաձորում մուգ կանաչ մաշկով խլեզներ կան, մարդու երես չտեսած, մարդուց երկյուղ չունեցող: Պառկում են քարերի վրա արևի տակ, ժամերով կարող եք նայել, թե ինչպես է զարկում փորի մաշկը թույլ երակի պես, կարող եք բռնել նրանց: Խլեզները մարդուց չեն վախենում»[3]:

Ա. Բակունցի տաղանդի կարևոր յուրահատկությունն այն է, որ նա «բնապատկերային գեղանկարչության հազվագյուտ ձիրքի ուժով վերարծարծեց ազգային բնությունը՝ իր հողով, լեռներով, ծառ ու ծաղ-կունքով, երկնքով ու ամպերով, անտառներով ու մարգագետիններով, թռչուններով ու կենդանիներով, բնության մյուս տարրերով: Եվ այդ ամենը նա մատուցեց ոչ թե իբրև սոսկական վերատպություններ, այլ անհատական ու «փիլիսոփայական» վերաբերմունքով, ժանրային տարբեր

---

[1] Տե՛ս Աղաբաբյան Ս., Հայ սովետական գրականության պատմություն, Գ. 1, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, էջ 455:

[2] Բակունց Ա., Երկերի ժողովածու 2 հատորով, հ. 1, «Հայպետհրատ», 1964, էջ 2 8:

[3] Նույն տեղում:

ձևերի ու ոճերի մեջ: «Սաբուն», օրինակ, հիշեցնում է միջնադարյան մանրանկարչության գույների վառվռությունը, «Ալպիական մանուշակը» նկարված է էպիկական շնչով, «Օրանջիան»՝ իմպրեսիոնիստական դյուրաբեկ, ջրաներկային գույներով, «Մթնաձորը»՝ ժանրային գծանկարով»[4]:

Պատմվածքների բազմաթիվ բնապատկերներ դպրոցականների համար ունեն ճանաչողական կարևոր նշանակություն, կարող են նպաստել ճանաչելու Սյունյաց լեռնաշխարհը, զմայլվել նրա բարձրաբերձ սարերով, թավուտ անտառների գունագեղությամբ, ալպիական մանուշակների բույրով, արևագալի ու արևամուտի գունախաղերով: Ահա այսպիսի մի բնապատկեր. «Բարձր են Մթնաձորի սարերը, դրանից է, որ ամռան երկար օրերին էլ արևը մի քանի ժամ է լույս տալիս Մթնաձորի անտառներին: Մթնաձորում ստվերները թանձրանում են, սաղարթի տակ անթափանց խավար է լինում, արջերը որսի են դուրս գալիս, վարազներն իջնում են ջուր խմելու, իր որջի առաջ զիլ ոռնում է գայլը, ոռնոցը հազար բերան արձագանքով զրնգում է Մթնաձորում»[5]:

Անտարակույս է, որ բակունցյան բնապատկերներն ունեն ոչ միայն ճանաչողական նշանակություն, այլև կարող են բարձրացնել դպրոցականների գեղագիտական ճաշակը, մշակել գեղեցիկը ոչ միայն տեսնելու, այլև նրանով ապրելու ունակություններ: Բնությունն իր հետքերն է թողել լեռնաշխարհի մարդկանց վրա, որոնք այդ գեղատեսիլ վայրերում ապրում են ծայրաստիճան աղքատության մեջ, գոյատևում են բնության ողորմածությամբ, ապավինում նրան:

Կարծում ենք, որ աշակերտների համար հետաքրքիր կլինի ծանոթանալ այդ մարդկանց կենցաղին, սովորույթներին, բնության վերաբերյալ նրանց պատկերացումներին, վարք ու բարքին: Նրանք հպարտությամբ են ընդգծում սյունեցի լինելու հանգամանքը: Ա. Բակունցի պատմվածքների հերոսները՝ Ավան ամին, Ղաթրինին, Աղալոն, Քյալա Ծատուրը, Աթա ապերը, Վանդունց Բաղին և էլի շատ ուրիշներ, իրենց հողին արմատներով կառչած «կաղնիներ են», և եթե նրանցից յուրաքանչյուրին հարցնես, թե ինչ ազգից ես, նա կտար տոհմի անունը՝ Ավետանց, Շալունց, Բակունց, և, ով գիտե, ինչ ազգանուններ, որովհետև նրանց լեզվով ազգ նշանակում է գերդաստան, տուն, որի բոլոր անդամները իրար հետ կապված են արյան կապերով: Իսկ եթե նրանց բացատրես, որ ազգությունն ես հարցնում, այլ ոչ թե տոհմը, նա կպատասխաներ.

---

[4] Աղաբաբյան Ս., Հայ սովետական գրականության պատմություն, Գ. 1, էջ 472 :

[5] Բակունց Ա., Երկերի ժողովածու հ. 1, էջ 33:

-Կյորեսցի եմ, Զանգեզուրի մարդ եմ…»[6]:

«Զանգեզուրի մարդկանցից» մեկն է «Մթնաձոր» պատմվածքի հերոսը՝ Ավին, որը գյուղում հայտնի էր որպես լավ որսորդ: Նա տան ապրուստի մի մասը հոգում է Մթնաձորի անտառներից, բացատներից միրհավ էր որսում, արտերի մեջ՝ կաքավ ու լոր, թակարդ էր դնում աղվեսի համար: Եվ եթե անտառապահ Պանինից երկյուղ չէր կրում, չոր ցախերից էլ մի շալակ էր անում, ծածուկ մի տեղ պահում գիշերով տուն տանելու համար»[7]:

Ավիի նման չարքաշ կյանքով են ապրում նաև Աքարում, Միրում, Մրոցում: Դարեր շարունակ ոչինչ չի փոխվել այս գյուղերում: Հին ավանդույթներն ու սովորույթները փոխանցվել են սերնդեսերունդ, դարձել կենսակերպ. «Ադաթը հին է՝ անհիշելի: Այդ ժամանակներից էլ սովորույթ է մնացել հաճար ցանել, ավազներում քլունգով փորել, ուժասպառ ու կռացած, օրնիբուն ձեռքերով պոկել ոսպի կարճ ցողունները, ոսպը ծեծել, ձմռան կարճ օրերին օրը երկու անգամ ոսպաճաշ ուտել, կամ էլ հաճարը ձավար անել ու մածունով ուտել»[8]:

Մթնաձորում, Աքարում, Կյորեսում և այլ տեղերում մարդն արժևորվում է ոչ թե իր արժանիքների հանգույն, այլ այն հնուց ի վեր արմատավորված կարծրատիպով, որ ամեն ինչի որոշիչը «չինովնիկի չինն է ու կոպեցի աշինը»: Եվ ով որ «չին ու արշին» չունի, ապրում է օրեցօր, ամսեամիս ձնագնդիի պես խոշորացող պարտքերի ծանրության տակ: Եվ պատահական չէ, որ Աթա ապերը հաճախ է կրկնում «Գորիսի գովքը» երգի տողերը՝ Իրանի Թուրանում չկա քեզ բարաբար,//Դառն ես դառել, Հե՜յ Զանգեզուր»:

Պարտքի տակ կքված է Վասիլը՝ «Տիգրանուհին» պատմվածքի հերոսը, ով «տնտեսությունը պլանով վարելու համար ձմռան մի գիշեր մտքում դրեց օրագրի նման մի բան պահել, նշանակել եզան վարն ու կերը, թե ինչքա՞ն հաց են ուտում ամեն ամիս, քանի՞ խուրձ խոտ է հարկավոր երկու կովին, ե՞րբ է ծնելու կովը, քանի՞ ձու է տանում քաղաք ծախելու համար»[9]:

Նրա գրառումներում ընդգծվում են մշտապես տանջող հոգսերը՝ «պարտք, տոկոս, պարտ առնիմ, պարտքի դիմաց, պարտքի կողմանից» և այլն:Ծմակի Խաչին պարտքերից ազատվում է ինքնասպան լինելով: Ինչ-որ

[6] Նույն տեղում, էջ 86:
[7] Նույն տեղում, էջ 30:
[8] Նույ տեղում, էջ 49:
[9] Նույն տեղում, էջ 2 58:

մի ժամանակ նա Միրումովներից պարտք է վերցրել «տասնմեկ մանեթ», որի դիմաց «տարին երկու անգամ՝ գարնանը և խոր աշնանը, երկու շալակ աղվեսի, կզաքիսի, լիսեմնի թանկարժեք մորթիներն է տանում Միրումովների մագազին, իսկ պարտքը աճում է ու աճում ձնագնդիի պես»:

Ապրելն օրեցօր դժվարանում է, և սկսվում է արտագաղթը. «Գնամ նոքար աշխատեմ, սրանից լավ կապրեմ: Չկա է՞, չկա, Կարմրաքարում ապրուստ չկա: Տարին տասներկու ամիս քարի, քոլի հետ կոխ կենաս, էս ցաքուտը վարես, էն քարի տակ սերմ գցես, էլի ձմեռը տաշտը ցամաք, պարկը դատարկ: Չէ՞, Կարմրաքարն ապրելու տեղ չի»:

Նախկին հողագործները, բրուտները, շինարար-վարպետները տնքում են պարտքերի ծանրության տակ, իսկ հարուստներն ավելի են հարստանում. «Մինը ձմեռը սխտորով ավելուկ չի ճարում, որ փորը տաքացնի, մյուսն էլ գառան փլավ է ուտում, վրան էլ նռան ջուր խմում, որ մարսի, սրան ի՞նչ կասես…»[10]:

Սակայն ամենաուշագրավն այն է, որ այդպիսի ծանր վիճակում ապրող մարդիկ չեն կորցնում իրենց արժանապատվությունը: Վանդունց Բադին՝ համանուն պատմվածքի հերոսը, օրնիբուն աշխատում էր, բայց չէր կարողանում ծերը ծերին հասցնել («Տարին բոլոր պահում էր Իսանանց ինը կովը.դրա համար ստանում էր մի սոմար ցորեն, երեք գրվանքա շաքար, որ իրենց չէր հերիքում և մի քիչ էլ փող»), չէր ուզում, որ որդին՝ Հաբուդը, պաշտոնյա դառնա: Ավելի լավ է մի արհեստ սովորի ու արդար քրտինքով վաստակի իր օրվա հացը, ապրի, ինչպես ինքն է ապրում՝ համեստ, բայց արժանապատիվ կյանքով: Նրա ընթրիքը համեստ էր՝ «պանիր, հաց, եթե կլիներ՝ տաք կերակուր, հանդից բերած կանաչեղեն, երբեմն էլ հարևանի բերած մի ազիզ կերակուր, որ տարին մի անգամ կեփվեր Բադու օջախում»[11]: Ա. Բակունցի ստեղծագործությունների ուսուցումն ավելի նպատակաուղղված կլինի, եթե ուսուցիչը դրանք ներկայացնի ոչ միայն ժամանակի սրված զարգացումների համապատկերում, այլև պարբերաբար ընդգծի, որ բակունցյան բնապատկերները հայրենիք են արտածում: Սյունյաց աշխարհը, որպես հայրենիք, անգնահատելի արժեհամակարգ, իր բնությամբ ուղորդում է հերոսներին, նրանց մեջ արթնացնում հայրենասիրական ջերմ զգացմունքներ: Փույթ չէ, որն կենսապայմանները ծանր են, հոգսերը՝ շատ, մտահոգությունները՝ բազմապատիկ: Ամեն գարնանամուտի Պետին՝ «Այու սարի լանջին» պատմվածքի հերոսը, մոռանում է ամեն ինչ ու հրճվում է բնության զարթոնքով, վայելում աստծո

[10] Նույն տեղում, էջ 42 6:

[11] Նույն տեղում, էջ 34:

առավոտների բերկրանքը.«Անպատմելի մի հաճույք էր զգում Պետին գարնան սկզբին: Ձյունաջրի առվակների պես նրա երակներում արյունն ավելի էր եռում և ծիծաղում էր, կոկորդային ձայներ հանում: Այսպես ախորժակով վրնջում էր ձին, երբ ախոռը ոսկեհատ գարի են լցում»[12]:

Հայրենիք են արտածում «Ալպիական մանուշակի», Կաքավաբերդի նկարագրությունները, Լառ-Մարգարի՝ կորուսյալ եզերքի հիշողություն-ները: Փակագծերում նշենք, որ ցանկալի կլինի աշակերտներին տեղեկացնել, որ Ա. Բակունցն առաջինն էր նորագույն հայ գրականության մեջ, որ անդրադարձավ Եղեռնի թեմային, ինչը մեծ համարձակություն էր ստալինյան բռնաճնշումների տարիներին:

Ընդհանրացնենք՝

1. Ա. Բակունցի ստեղծագործությունները պետք է ուսուցանել այնպես, որ աշակերտները դուրս չմնան դասապրոցեսից, ակտիվորեն մասնակցեն քննարկումներին, առաջադրեն իրենց հետաքրքրող հարցեր:
2. Ցանկալի է, որ ուսուցիչը կիրառի դասապրոցեսի կազմակերպման մի քանի մեթոդներ, տեսասահիկի միջոցով ցուցադրի Ա. Բակունցի ստեղծագործություններին բնորոշ մի քանի նկարներ.

Զանգեզուրյան լեռներ

Ձիերի երամակ

Հին Գորիս

Գորիսը այժմ

[12] Նույն տեղում, էջ 54:

Արդյունավետ կարող է լինել նաև «Գրական խմբակ», «Վենի դիագրամ», «Պրիզմա», «Բառաբաժան» և այլ մեթոդներ:

Եզրակացություն

Դպրոցական ծրագրերում ընդգրկված գեղարվեստական ստեղծագործությունները, բացի ճանաչողական ու դաստիարակչական նպատակներից, հետապնդում են նաև աշակերտների գեղագիտական ճաշակի ձևավորման ու զարգացման նպատակներ: Այս առումով խիստ ուշագրավ են Ակսել Բակունցի պատմվածքները, որոնք ընթերցողի առջև բացում են մի ուրույն աշխարհ՝ իր բազմերանգ գույներով, բնության հետ ներդաշնակության ձգտող մարդկանցով, նրանց ուրախությամբ ու դրամատիկ ապրումներով:

Ակսել Բակունցի պատմվածքներում բնապատկերները տեսանելի են տարածական բոլոր չափումների համապատկերում և ամենևին դեկորացիաների դեր չեն կատարում: Դրանք համահունչ են հերոսների ապրումներին, արտացոլում են նրանց հույզերն ու զգացմունքները:

Սույն հոդվածի նպատակը Ակսել Բակունցի պատկերաստեղծման յուրահատկությունների բացահայտումն է, առաջադիր խնդիրն է մանկավարժական մտքի արդի պահանջների համապատկերում դրանք աշակերտներին ներկայացնելը, նրանց գեղագիտական ճաշակի ձևավորումը, գեղեցիկը տեսնելու և արժևորելու ունակությունների մշակումը:

Эмин Малхасян

Рассказы Акселя Бакунца как важное средствовоспитанияшкольников

Резюме

Художественные произведения, включенные в школьные программы, кроме познавательно-воспитательных целей, преследуют также цели развития и развития эстетического вкуса учащихся. В этом отношении очень примечательны рассказы Акселя Бакунца, которые открывают перед читателем неповторимый мир с его красками, людей, стремящихся к гармонии с природой, их радости и драматичных переживаний.

В рассказах Акселя Бакунца пейзажи видны во всех пространственных измерениях, они не играют роль всех декораций.

Они соответствуют чувствам героев, отражают их эмоции и чувства.

Цель данной статьи - раскрыть особенности образности Акселя Бакунца, ведущая задача - представить их учащимся в контексте

педагогической мысли, развить у них эстетический вкус, развить умение видеть и ценить прекрасное.

Emin Malkhasyan

Axel Bakunt's novels as an important aesthetic education method for schoolchildren

Summary

Fiction works included in school programs, except cognitive and educational purposes, follow students' goals of aesthetic taste and purposes of development.

According to this,novels written by Axel Bakunts are significant. They open a unique world to the reader with their colors, people who are looking for harmony with nature, with their happiness and dramatic feelings.

Axel Bakunt's novels showlandscapes, that are visible in all dimensions and they do not play a decorative role.

The novels are consistent withthe feelings of heroes and reflect their emotions.

The purpose of this article is to reveal Axel Bakunts's imagerypeculiarities. The leading task is to present the novels to schoolchildren in the context of pedagogical thought, to develop their aesthetic taste and the ability to see and value the beauty.

Խմբագրություն է ուղարկվել 12. 08. 2022թ.
Հանձնարարվել է գրախոսության 01. 09. 2022թ.
Տպագրության է հանձնարարվել 16. 09. 2022թ.